



Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարեկան 6 ռուբլի.
Առանձին համարները 5 կոպէկով.
Թիֆլիսում գրվում են միմյանի խմբագրատան մէջ.
Մեր հասցէն. Тифлисъ, Редакция «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տ է Լ է Ք Օ Ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ առն օրերէն).
Յայտարարութիւն ընդունվում է առանձին լեզուով.
Յայտարարութիւնները համար վճարում են
իրաւաբաններ տողատեղին 10 կոպէկով.
Տ է Լ է Ք Օ Ն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳԻՐԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՔՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ի՞նչ կարող ենք պատասխանել.—Ներքին
ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ջանչանի յիշատակին. Նամակ
Բաթումից. Ներքին լուրեր. — ԱՐՏԱՔԻՆ ՏԵ-
ՍՈՒԹԻՒՆ. Արապքի լուրեր. — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.
ՅԱՅԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ.
Ախալցխայի աղէտը.

ԻՆՉ ԿԱՐՈՂ ԵՆՔ ՊԱՏԱՍԽԱՆԵԼ

Մեր ստացած տեղեկութիւններից երե-
ւում է, որ ներկայումս յանձնված է յա-
տուկ պաշտօնական ռուսական մեր
Անդրկովկասի առևտրի խնդիրները
և պարզել, թէ մարտերի մէջ ինչ փոփոխու-
թիւններ պէտք է անել տեղական արդիւ-
նաբերութիւնը զարգացնելու և պետական
շահերը պաշտպանելու նպատակով: Պաշ-
տօնականները պէտք է մայրաքաղաքից գա-
նան Անդրկովկաս և տեղեկութիւններ ծանօթանան
տեղական պահանջների հետ և խորհրդ-
գակներ հանում անձերի հետ:

Ցանկով պէտք է նկատենք, որ մեր
երկրում գոյութիւն ունեցող հիմնարկու-
թիւնները մինչև այժմ լուրջ ձեռք չեն
բռնել մեր երկրի արդիւնաբերութեան
խնդիրները և չեն պարզել նրա պահանջնե-
րը: Այնպէս որ նրանք պատրաստ և մշակ-
ված պատասխաններ չունեն տալու այն
հարցերին, որոնք հերթական են դարձել և
պէտք է հանդէս գան առաջիկայում:

Մենք ունենք Թիֆլիսում յատուկ կո-
միտէ, որ կոչված է մեր երկրի առև-
տրի և արդիւնաբերութեան ներկայա-
ցուցիչը լինելու և որ, հետեւելով տնտեսա-
կան կենտրոն փոփոխութիւններին, պէտք
է հանդէս բերէ անընդհատ բարեփոխու-

նների ծրագրերին: Մենք ունենք Գիւղա-
տնտեսական ընկերութիւն, որ պարտաւոր
է արձանագրել մեր գիւղատնտեսութեան
մէջ տեղի ունեցող երևոյթները և փոփո-
խութիւնները և որոնք միջոցներ հա-
րթելու այդ ընդարձակ արդիւնաբերութե-
ան զարգացման ճանապարհները: Մենք
ունենք նոյն և ուրիշ հարցերի մասին
տեղեկական ընկերութիւններ Թիֆլի-
սում և Բաքուում, որոնք գործունէութիւ-
նը մինչև այժմ պատահական բնաւորու-
թիւն է կրում, մինչդեռ բաւականաչափ
հերթական հարցեր են առաջ եկել, ո-
րոնք պահանջում են յատուկ ուշադրու-
թիւն:

Այդ բոլոր ունենալով մենք ստիպված
ենք դարձնել խոտովանելու, որ լուրջ
կերպով մենք չենք բնութագրում մեր
տնտեսական կենտրոն խնդիրները, որ մենք
անկարող ենք բնորոշել մեր երկրի առևտրի
և արդիւնաբերութեան վիճակը և չենք
մշակել այն միջոցները, որոնցով հնարա-
ւոր կը լինի նպաստել նրանց զարգաց-
մանը:

Այդ հանգամանքի վրա մենք կանգ ենք
առել մի քանի անգամ և հրաւիրել ենք
մեր երկրի գործողներին ուշադրութիւնը:
Մենք անհրաժեշտ ենք համարում նորից
հանդէս բերել նրան, աչքի առաջ ունե-
նալով նրա կարեւորութիւնը և գործնա-
կան նշանակութիւնը:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՋԱՆՇԵԱՆԻ ՅԻՇԱՍԿԻՆ

«Русск. Вѣд.» լրագիրը հաղորդում է, որ
Մոսկովայի երկու յայտնի երգիչուհի հաւատար-

մանցները եւ թէ բոլոր արտերը—բոլորը ջար-
դեց ու գեղատառ արեց: Ամբողջ քաղաքը
իր շրջակայքով՝ սպիտակ էր, կարծես ձիւնով
էր ծածկված: Գիւղերում այնպիսի տեղ է
եղել, ուր կարկուտը, ինչպէս առում են, 1/2
արշին բարձրութեամբ նստել է:

Միանգամայն մեղանում չէ տեսնված բան
էր: Թէ գիւղացիների եւ թէ քաղաքացիներից
չատերի ամբողջ տարվայ աշխատանքը եւ
յոյսերը մի քանի րոպէի մէջ ոչնչացրեց կար-
կուտը:

Բարեբախտաբար, մի քանի գիւղերում ար-
տերը հնձած եւ վերցրած էին ու կարկուտից
ազատվելին: Բայց բուսականութիւնից կար-
կուտը ձեռք էր քաղաքի շինութիւններին.
չատ փողոցների վրա գտնված պատուհանների
ապակիները ջարդեց, նոյն իսկ բաղանիքներում
կտուրների վրայի ապակիները կտորոտվելով,
կարկուտը սկսեց ներս տեղադրել: Ներսում եղած
մերկ կանայք սարսափահար եւ լեղապատառ
սկսեցին կիսահագնված դուրս վազել: Կարկու-
տից յետոյ սկսեց անձրեւել, առաջացան սոս-
կալի հեղեղներ. թէ «Մարտա-Չայ» կոչված
առու եւ թէ մանաւանդ Փոցիով գետը արա-
գութեամբ սկսեցին բարձրանալ եւ ափերից
դուրս գալով ողողեցին բոլոր շրջակայ տեղերը
եւ շինութիւնները: Բոլոր մտաւայ արտերը,
պարտեզները, բանջարանոցները, տները լցվել
էին ջրով եւ տիղմով: Զուրը ճանապարհին
ամեն ինչ քանդուկ տառուկ էր. շատ ծառեր,
գերաններ, քարեր, ստակած կենդանիներ կո-
վերի, եզերի, գոմէշների, ձիերի դիակներ
քլում բերում էր, իսկ քաղաքի փողոցների եւ
եմալաների միջով անցնող հեղեղները ջրով
լցրեցին բոլոր շրջակայ ցածր տները, խանութնե-
րի նկուղները եւ ներքնայարկները: Թէ հին եւ
թէ նոր քաղաքամասերում հարեւուրտ տներ
կիսով չափ ջրի մէջ էին կանանց եւ երեխա-
ների աղաղակներ, լաց ու կոծի ձայները
բռնել էին ամբողջ փողոցը. ամենքը, սարսա-
փահար ալս անապատելի աղէտից, ամեն ինչ
թողնելով ջրի քանաճոյքին, դուրս էին փախ-
չում իրանց կեանքը ազատելու համար: Թէ

մատարներ Պ. Ա. Ստոյպովսկի եւ Դ. Ն. Դոր-
բոյսով գիտել են Մոսկովայի դատաստանա-
կան պալատի շրջանի երգչուհի հաւատարմա-
տարների խորհրդին հետեւել յայտարարու-
թեամբ:

«Յուլիս ամսի 17-ին լրանալու է առաջին
տարեդարձը մահվան Գրիգորի Աւետիկի
Ջանչանի, որ մի ամբողջ քաղաք դար Մոսկ-
վայի երգչուհի փառաբանութեան զարդն էր
եւ փառք ու պարծանքը իր մասնագիտական
գործունէութեան առաջին քայլերից իսկ, դեռ
երգչուհի հաւատարմատարի օգնական լինելով,
հանգուցեալ Գրիգորի Աւետիկին ուշադրու-
թիւն էր դրւում, իբրեւ մի իրաւաբան՝ հա-
զուագիւտ գիտութեան պաշարով, աշխատա-
սիրութեամբ եւ ընդունակութիւններով: Նրա
պատանեկան իրաւագիտական-հրապարակա-
խօսական աշխատութիւնները սիրալիք ընդու-
նելութեամբ եւ գովասանական քննադատու-
թեամբ էին արժանանում այն ժամանակվայ,
այն է 70 թւականները սկզբի, մասնագիտա-
կան թերթերում եւ ամսագիրներում: Գրեա-
կան եւ քաղաքացիական դատարաններում նրա
արտասանած ճառերը եւ կազմած դատաւա-
րական թղթերը խոր եւ համակրելի տպաւո-
րութիւն էին գործում դատաւորների եւ ուս-
նիչների վրա, ի բաց չառած նաեւ այն ան-
ձանց, որոնք նրա հակառակորդներն էին
լինում դատական մաքառման մէջ:

Այդ մաքառումը նա վարում էր միշտ առ-
պետական շիտակութեամբ եւ կատարելապէս
անարատ միջոցներով: Մեր թանկագին բնիկ-
րոջ այդ յատկութիւնները փայլուն աշուղու-
թիւն էին խոստանում նրան իբրեւ գործնա-
կան-փաստաբանի, բայց, բոլորովին անապա-
հով մարդ լինելով եւ յաճախ անհրաժեշտ բա-
ների մէջ կարիք գգալով, նա այնուամենայնիւ
չը դրաւից այդ աշուղութեան հետնակարգով:
Փաստաբանական ասպարէզի գործնական չըը-

տներում եւ թէ նկուղներում՝ բոլոր իրեղէն-
ները, կահկարասիքը, անկողինները եւ ապ-
րանքները մնացել էին ջրի եւ տղի մէջ. ամեն
մի լցված տուն մի-մի փոքրիկ լճակ էր
դարձել: Եղան այնպիսի դէպքեր, որ տան տե-
րերը անապատելի տուն մտնող հեղեղից ազատ-
վելու համար, զոնից անկարող լինելով, սկսե-
ցին պատուհանները կտորելով դուրս թռչել:
Ինչպէս լեցնելը, մարդկային զօնք չեն եղել,
եւ եթէ եղել են՝ առայժմ յայտնի չէ: Աղէտի
մասնվածներին օգնութեան հասան մարդիկ եւ
ոստիկանութիւնը: Իշխանութեան կարգադրու-
թեամբ եկան զինուորներ, որոնք տնեցիների
օգնութեամբ սկսեցին հեղեղած տները լցված
ջրերը դուրս թափել: Ամբողջ օրը եւ գիշերը
խեղճ տնեցիները, մեծ ամանները կրկնով,
կարողացան մի կերպ ջուրը դուրս թափել, իսկ
քնել չը կարողացան, որովհետեւ ոչ մաքուր
անկողին ունէին եւ ոչ էլ չորեր:

Բացի քաղաքից սաստիկ ձեռավել են եւ
Սիւխիս, Կոնջալ, Բենարայ, Արալ, Ուտէ,
Չալայ, Ծիւսի գիւղերը. իսկ մասնաւորապէս
ձեռավել են Ծիւսայ, Ծուրդուր, Վալէ, Մեծ-
Բամաջ, Փարախայ գիւղերը: Աւելի ողբալի
դրութեան հասան Սիւխիս եւ Ծիւսի գիւղերը,
որոնք ամեն թանցից զրկվեցին. թէ ծառա-
պտուղները, թէ բանջարանոցները եւ թէ բոլոր
արտերը կարկուտը եւ հեղեղը քանցել տարան:
Ուտի նրանք կարոտ են անապաղ օգնու-
թեան:

Հետզհետէ մանրամասն տեղեկութիւններ
ենք առնում ձեռնված տեղերից: Աղէտը գիւ-
ղերում աւելի սոսկալի է եղել. այնտեղ կար-
կուտն աւելի խոշոր է եղել, քան քաղաքում:
Եղել են տեղեր, ուր հաւի ձուր չափ եւ էլ
մեծ կարկուտ է եկել եւ աւելի մեծ ձեռք
հասցրել: Վնասված գիւղերի մեծ մասը (Սիւխ-
իս, Սազլի, Ար, Չալայ եւ այլն) այս րօպէս
կատարեալ ամայի են դարձած. թէ կարկուտը
եւ թէ հեղեղը բոլոր բուսականութիւնը տա-
վել, ոչնչացրել են: Այգիներում պտղատու

լանը նեղ էր նրա ձիւրքերի եւ եռանդի համար,
դատաստանական դահլիճը շատ անձուկ էր
նրա ջնքը ու հանդգնած խօսքի համար, որ
հնչում էր ի պաշտպանութիւն իրաւունքի,
ճշմարտութեան, արդարութեան, ազատութեան
եւ մարդասիրութեան... Չը խզելով իր կապը
մեր դասակարգի հետ, նրազգաց կերպով ար-
ձագանք տալով նրա ներքին, տնային եւ հասա-
րակական կեանքի ու գործունէութեան բոլոր
ուրախ ու տրուր երևոյթներին եւ չը դադա-
րեցնելով իր կարիքներու փաստաբանական
գործունէութիւնը,—դատաստանական թղթեր
եւ բարդ պայմանագրութիւններ կազմել եւ
խորհուրդներ տալ իրան դիմող սակաւաթիւ
գործատէրերին եւ բազմաթիւ ընկերներին,—
Գրիգորի Աւետիկին վերջին 12—15 տարի-
ների ընթացքում շատ հազուադէպ էր հանդէս
գալիս դատարաններում եւ ատտիճանաբար դառ-
նում էր միայն իրաւաբան—հրապարակախօս:
Նրա վերին աստիճանի շնորհալի, անարատ
կերպով ազնիւ եւ խորապէս մարդասիրական
գործունէութիւնը այդ ասպարէզում տանեակ
տարիներ տեղի է ունեցել մեր աչքի առջեւ
եւ շատ լաւ յայտնի է մեզ բոլորիս: Նա
ստեղծեց նրա համար, լիովին արժանաւոր
կերպով, աղմկալից փառք, լայնատիրեւ հռչակ
եւ անագին թուով անկեղծ յարգողներ ամե-
նատարեք հասարակական խմբերում, սկսած
մեր ինտելլիգենցիայի ամենաբարձր եւ ամենա-
լաւ մասի ներկայացուցիչներից մինչեւ կիսա-
գրագէտ գիւղացիներ...

Այնուհետեւ ապացուցանելով, որ Մոսկովայի
երգչուհի հաւատարմատարների խորհուրդը
պարտական է յարգել հանգուցեալի յիշատակը,
յայտարարութեան ստորագրողները առաջար-
կում են.

1) Յուլիսի 17-ին փաստաբանական դասա-
կարգի անունից եւ խորհրդի ներկայութեամբ,
հանդիսաւոր հոգեհանգիստ կատարել առաւ-

ծառերի չոր-չոր ճիւղերն են միայն մնացել,
թէ պտուղները եւ թէ տերեւները բոլորը կար-
կուտ թափել է. իսկ ցանքերը, բանջարա-
նոցները, բոստանները եւ արտերը—հիմնայա-
տակ են եղել բոլորովին: Անցեալ օրը գիւղա-
ցիները մի քանի հատ սպիտակ մարմարանման
քարեր էին բերել, հատը մօտ 1/2 ֆունտ.
պատում են, որ կարկուտի հետ միասին երկնքից
են թափվել: Այդպիսի քարեր թափվել են՝ Ա-
րալ, Կոնաչէն, Սազլի, Մէլուսէթ գիւղերում:
Բացի կարկուտից եւ հեղեղից քիչ ձեռք
տուել եւ փոթորիկը: Ինչպէս պատմում են,
մի քանի տեղերում փոթորիկը այն աստիճան
սոսկալի եւ ուժգին է եղել, որ քչել է անա-
գին հնձած եւ ժողոված ցորենի, խորձեր,
քանի էլ շատ տներ եւ ցանկապատեր, նոյն
իսկ մի քանի ծառեր արմատախիւ անելով,
քչել տարել է:

Մի խօսքով մեղանում այդ չը տեսնված բան
էր: Մերերը պատմում են, որ այսպիսի կար-
կուտ մէկ էլ եկել էր Ախալցխայում 1848 թ.
խոյնեայի ժամանակ, որից յետոյ խոյնեայ
զաղարել է: Հարեւուրտ մարդիկ, թէ գիւղա-
ցիներից եւ թէ քաղաքացիներից, ամեն օր
խումբ խումբ գալիս են քաղաք եւ իրանց ցա-
ւը յայտնում իշխանութեան: Անյապաղ օգնու-
թեան կարոտ են. որքան շուտ այնքան լաւ:
Արդէն, գաւառապետ կարգադրութեամբ, բո-
լոր ձեռնվածները անունները, տեղերը եւ վը-
նաների քանակութիւնը ցուցակագրում են.
գաւառապետի հրաւերով, ամեն օր խումբ-
խումբ գիւղերից գալիս են եւ յայտնում իրանց
ձեռնները, ինչպէս լուծւ ենք, կառավարու-
թիւնը ձեռնվածներին օժանդակութիւն պէտք
է բաժանէ: Ամսիս 6-ին էլ յայտնող ժամանց
Թիֆլիսի նահանգապետից ուղարկված առանձին
յանձնարարութիւնների պաշտօնեայ իշխան
Մուխրանսկի, որը, գալով Ախալցխա, քաղաքի
պրիտամիւրի եւ գաւառապետի հետ միասին
չըլում է թէ քաղաքի եւ թէ գիւղերի ձեռնա-
ված տեղերը եւ տները քննում ու ձեռնները
ցուցակագրում է:

Գ.

դաւան հոգեւորականութեան միջոցով Զան- յանի գերեզմանի վրա: 2) պատկ դնել գերեզ- մանի վրա: 3) մի եւ նոյն օրը խորհրդի հրա- պարակական նիստ կայացնել: Նուիրված հան- գուցեալի յիշատակին: 4) խորհրդի դահլիճը զարդարել հանգուցեալի պատկերով: 5) փա- տարանական դասակարգի մէջ հանգանակու- թիւն բանալ հանգուցեալի պատկերը դնելու եւ նրա անունով մի ստիպէնդիա հիմնելու համար Մօսկվայի կայսերական համալսարանի իրաւաբանական բաժանմունքում:

ՆԱՄԱԿ ԲԱՔՈՒՄԻՑ

Յուլիսի 7-ին

Ներկայումս ամբողջ քաղաքում խռովու- թեան նիւթը յունիսի 25-ին քաղաքային դռնաբան տեղի ունեցած դէպքն է, որի պատճառով գործը այն տեղը հասաւ, որ Բու- թայիսի նախագահական ատենակից յատուկ քըն- նիչ է ուղարկված պարզաբանելու այդ հար- ցերը եւ խաղաղացնելու ծայնաւորների ու անդամների մէջ տիրող այն բոլոր խռովու- լիւթիւնները, որոնք առիթ տուին գործին այդքան սուր կերպարանք ստանալու: Այդ բոլորի պատճառները մօտաւորապէս հետե- լեայն են:

Ինչպէս արդէն իր ժամանակին («Մշակ» № 41) հաղորդել էինք, վարչութեան անդամ Ի- վանովի ժամանակը արդէն լրացած լինելով, բնականաբար դռնաբան պէտք է ձեռնարկէր նոր անդամի ընտրութեան: Կարող էինք, ի հարկէ, ի վանովին նորից վերընտրել, որպէս արդէն 8 տարի ծառայած եւ փորձված մարդու, բայց քանի որ նրա ստանձնած գործերում սկսեցին հաշիւները վերաբերութեամբ ինչ որ զեղ- ծուկներ երևալ, դրա համար էլ ծայնաւորնե- րից մի մասը սկսեց հակառակել նրա վեր- ընտրութեան: Վերջինների վարձուքն արդա- րացի էր մասամբ այն տեսակետով, որ ինքը ի վանովի էլ, շատ սառն էր վերաբերվում դէ- պի այդ իր հասցին ուղղված մեղադրանք- ները եւ երբեք մի դրական միջոցի չէր դի- մում կամ իրան արդարացնելու, եւ կամ յանցանքը պարզապէս երեսան հանելու հա- մար, այլ դանազան պատճառաբանութիւննե- րով իր հաշիւաւորութիւնը միշտ ձգձգում էր միայն Սակայն, չը նայելով այդ բոլորին, եւ չը նայելով առաջին ընտրութեան ժամանակ նրան սեւացնելուն, այնուամենայնիւ երկրորդ ընտրութեան ժամանակ 3 թեկնածուների թուում ընտրվեց եւ ի վանով, միայն թէ ծայ- ների ատենադրութեամբ վարչութեան անդամ ընտրվեց անտառապետ Մարկելիչը:

Մարկելիչի ընտրութիւնը չը հաստատվեց, որովհետեւ նա առաջարկել էր, թէ ինքը այդ պաշտօնը կը ստանձնի այն դէպքում միայն, եթէ իրան թոյլ կը տան երկու պաշտօնը միա- ցին վարելու, որը, ի հարկէ, անկարելի էր: Այդ այդպէս լինելուց յետոյ, բնականաբար, ի վանովի տեղը դարձեալ մնում էր թափուր: Այստեղ չը պէտք է մոռանանք ասելու, որ մինչեւ այդ րոպէս գործը արդէն մի տեսակ կուսակցական ձեւ ընդունեց, եթէ կարելի է այդպէս ասել, որ եւ վրաց կուսակցութեան մէջ: Տեղական «Черноморский Вест.» լրագիրը ի վանովի կողմը լինելով, առանց զեղծումների մասին մանրամասնութիւնների մէջ մանելու, անպայման կերպով պահանջում էր նրան նու- րից վերընտրելու, եւ դրա հետ մի շարք շատ անվայել դիտողութիւններ սկսեց գրել թէ դռնաբան եւ թէ առաջարկ վրացիների հաս- ցէին (իշխալ թերթի խմբագիրը թէ դռնա- ան ձայնաւոր եւ եւ թէ ի վանովի կուսակցի), իսկ միւս կողմը մնաց տատանման մէջ ի վա- նովին վերընտրելու հարցում, որովհետեւ կա- րածում էր նրա մաքուր մարդ լինելու մասին: Այդ բոլորից յետոյ վերջապէս տեղի է ունե- նում Մարկելիչի ընտրութիւնը, որի հաստա- տութիւնը, սակայն, հիմնաւոր վստահանի չէ հասնում:

Եւ ահա, որպէս զի երրորդ անգամ ընա- րութիւն կատարելու ժամանակ նորից ան- կարգութիւններ տեղի չունենան, Բուժայիսի նախագահապետը հրամանագրում է դռնաբան, որ իր կողմից ի վանովին նշանակում է վար- չութեան անդամ:

Յունիսի 25-ի նիստում, քաղաքագլխի- հի- ւանդութեան պատճառով, ի վանովի ինքը, որ- պէս քաղաքագլխի տեղապահ, նիստը բաց է անում. սկսում են վճռել հերթական հարցերը, որոնց թուում, ի միջի այլոց, տեղի է ունե- նում նաեւ փոխ-նախագահութիւն կարգադրու- թեան ընթերցումը: Ի վանովին նորից իր պաշ- տօնում հաստատուելու մասին: Այդ հանգաման-

քը ծայնաւորներից շատերին տարօրինակ է թուում, որ երկու անգամ դռնաբան կողմից սե- ւացրված մարդուն փոխ-նախագահապետը նորից անգամ է նշանակում, ուստի եւ ծայնների մե- ծածածակութեամբ վճռում են բողոքել ուր հարկն է փոխ-նախագահապետի այդ կարգադրու- թեան դէմ: Այդպէս էլ վերջանում է:

Եւ ահա անմիջապէս առաջ է գալիս մի ու- ռիչ հարց, քաղաքագլխի տեղապահի պաշտօնի հարցը: Դռնաբան, չընդունելով ի վանովի ընտր- ված լինելը, հետեւեալպէս եւ բաց է համարում այդ պաշտօնը, ուստի եւ առաջարկվում է նոր ընտրութիւն կատարել ի վանով մերժում է այդ հարցին մասնակցելու եւ, չըլծան վերցը հանելով, նիստը արդէն փակված է համարում ու սկսում է դուրս գնալ: Նրան հետեւում են եւ մի քանի ծայնաւորներ (մեծ մասամբ հայեր, ռուսներ եւ յոյներ): Հակառակ այդ բոլորի, վարչութեան անդամ Վոլովին, գրա- լելով ի վանովի, այսինքն, նախագահի տեղը, վերջ է անցնում չըլծան եւ սկսում շարու- նակել նիստը, որի ժամանակ եւ իրան ընա- րում են քաղաքագլխի տեղապահ: Ահա այս են մօտաւորապէս այն բոլոր տարածախոսութիւն- ների պատճառները, որոնք այնքան սուր կեր- պարանք ստացան եւ որոնք անվերջ խռովու- ցութեան նիւթ դարձան մեր քաղաքի հասա- րակութեան համար:

Գ. Գրիգորեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ռուսաց լրագիրները հաղորդում են, որ մի յատուկ յանձնաժողով առաջիկայ աշնան զբաղ- վելու է հայոց բարեգործական հիմնարկու- թիւնների ընթացիկ հարցով եւ որ այդ յանձ- նաժողովի նիստերին հրաւիրվելու է նաեւ ներ- կայացուցիչ Վեհապետ կաթողիկոսի կողմից:

Անտանիլի սաստիկ շոգերից յետոյ ահա եր- կու օր է, որ Թիֆլիսում եղանակը մեղմացել է: Անձրեւներ եկան քաղաքում եւ նրա չրջա- կայքում:

Թիֆլիսի նախագահական դատարանը չը հա- տատեց այս տարի սպանված Ա. Մեղվիւնովի կտակը, որով, ի միջի այլոց, որոշ դռնաբան էր թողնված բարեգործական նպատակով: Հան- գուցեալի եղբայրների փառաբանը, երջուհալ հաւատարմատար Միլիք-Նուբարեան, խնդրե- լով անվաւեր ճանաչել կտակը, հիմնվում էր այն հանգամանքի վրա, որ վանիցը կտակը ստորագրելիս չէն իմացել, թէ ինչ թուղթ են ստորագրում, եւ որ ինքը Մեղվիւնով այդ ժա- մանակ հարբած է եղել:

«Русс. Вѣд.» հաղորդում է, որ Լեւ Տօլ- ստոյ նամակ է ստացել մի հնդկի գրողից, որ գրում է, թէ հնդկների մէջ հետզհետեւ աւելի եւ աւելի սաստկանում է հետաքրքրութիւնը եւ խորին համակրութիւնը դէպի Տօլստոյի կրօնական-փիլիսոփայական գործունէութիւնը: Նոյն լրագրում կարդում ենք, որ ամերիկա- կան «Idler» ամսագրի յուլիսեան գրքովում տպված է Բերլինի ամերիկական դեսպան Էնդ- րիւ Ուայտի յօդուածը Տօլստոյի մասին: Թո- դուածագիրը Տօլստոյի համախոհներից չէ, բայց այցելել է նրան եւ խոր տպաւորութիւն է ստացել նրա անձնաւորութիւնից եւ խօսակ- ցութիւնից: Իր յօդուածը պ. Ուայտ վերջաց- նում է հետեւեալ խօսքերով. «Տօլստոյի պա- րազօքները (օրինակ, որ բաղմամբ ըն- տանիքի տէր լինելով նա հերքում է ամուս- նութիւնը) կը ժողովեն ժամանակի ընթաց- քում, բայց նրա անձնութեան լինելու ի կեան- քը, նրա ազնիւ մտքերը, նրա վսեմ իդէալները դարերի ընթացքում աւելի ու աւելի ոյժով լուստաւում եւ կենսատու աղբիւր կը դառնան նոր Ռուսաստանի համար»:

«НОВОСТИ»-ին հետագրում են, որ Մօսկվայի Ժուժկայութեան ընկերութեան անդամներից շատերը, որոնք դէմ են եղել դերձակ Վօրոու- նեակի եւ իր ընկերների առաջարկութեան, պատ- ճառարանված բողոք են ներկայացնելու ընդհա- նուր ժողովին այն որոշման դէմ, որ վերաբե- րում էր Տօլստոյին ընկերութեան պատուաւոր անդամութիւնից զրկելուն:

«НОВ. ОБОЗР.» լրագրին հետագրում են Սա- արեղից. «Յուլիսի 4-ին տեղադատարանի անձ- րեւը անթիւ աղէտներ առաջացրեց իմէրէթիա- յում: Բոլոր տներն ու եգիպտացորենի արտե- րը հեղեղված են: Փչացան աւազին թւով մանր անասուններ եւ անային թռչուններ: Հաղոր-

դակցութիւնը շատ տեղերի մէջ ընդհատված է: Վնասները ահագին են»:

ԿՕՁՕԲԻՑ մեզ հաղորդում են, որ այնտեղ երեւացել է կօկլիւշ կոկորդային հիւանդու- թիւնը մի քանի ընտանիքներում:

ՆՈՒՈՒՈՒՑ մեզ հաղորդում են, որ այնտեղ ներկայ յուլիսի 7-ին, շաբաթ օր, տեղի ունե- ցաւ սաստիկ հեղեղ, որ մեծ աւերումներ գոր- ձեց եւ քանդեց տներ:

ԵՎԱՏԵՐԻՆՆՈՒՄԻՑ մեզ գրում են. «Յուլի- սի 8-ին, այստեղի ապակիի գործարանի մօտ երկու շափար պատանում են յայտնի աւազա- կապետ Չօլախ Բալային. սկսվում է հրացա- նաձգութիւն, Չօլախ Բալան սպանվում է, իսկ շափարները անվնաս են մնում: Ինչպէս պատ- մում են, այս աւազակն է եղել Սինխի ճա- նապարհին զինվորների կողոպտողը: Սպանվա- ծի մօտ գտել են 200 փամփուշտ եւ բաւակա- նաչափ թալանած ապրանք»:

ԱՐԾՈՒԱՆԻՅ զիւղից (Չանգեւորի գաւառ) մեզ գրում են. «Յուլիսի 25-ին Շարաբաղի անտառապետ պ. Սաքուրաթ Թուրախի Գան- ձակի նահանգի պետական կալուածների կա- ռավարչի հետ անցնում էին ձիերով Չափնուր գետով, «Միւնիք» գործարանից 4 վերտ ցած: Չափնուր գետի ջուրը շատ է արագըն- թաց եւ ժայռոտ յատակ ունի: Պետական կալուածների կառավարիչը առաջ է դնում Ծառուր Տէր Մարգարեանցի հետ, որ անտառ- ների վերակացու է: Անտառապետ ամբողջ իր ուշադրութիւնը դարձրած է լինում կառավարչի վրա, որպէս զի ջուրը վնաս չը հասցնէ նրան. կառավարիչը անվնաս անցնում է, բայց ան- տառապետի ձին ընկնում է յանկարծ խոր տեղ, եւ ջուրը իր ոյժով պոկում է անտառապետին թամբից ու քշում է: Տէր-Մարգարեանցը, տեսնելով այդ, վազում է ետեւից եւ ուղում է ազատել իր մեծաւորին, երկարացնելով հրա- ցանք դէպի նրան: Անտառապետը թէպէտ բռն- նում է հրացանի ծայրից, բայց Տէր-Մարգա- րեանցի ձին խառնում է եւ ազատելու այդ միջոցը չէ աշղոլվում: Այնուհետեւ անտառա- պետը ըղձալով երկու անգամ մօտենում է ափին, բռնում է խոտերից, բայց խոտերն էլ պոկ են գալիս եւ նա նորից ընկնում է ջրի մէջ տեղը: Ծառ ժամանակ կուռելուց յետոյ անտա- րապետը ուժաւորւում է դառնում եւ խորատուղ- վում է ջրի մէջ: Տէր-Մարգարեանցը, չը կարո- ղանալով իր երկարացրած հրացանով օգնել, մտնում է ջրի մէջ, բայց դարձեալ անաշղո- լա դուրս է գալիս ափ եւ վազում է դէպի ցածը ջրից անտառապետի առաջ կարելու: Նրան հետեւում են եօթը ուրիշ անտառային ծառայողներ: Տէր-Մարգարեանցը, տեսնելով, որ մի տեղ գետը քիչ լայնացած է, մտնում է ջուրը, իջնում է ձիուց եւ երբ ջուրը բերում է անտառապետի մարմինը, բռնում է նրա կոնե- րից եւ բարձրացնում է, այդ ուղիքին հասնում են Յովսէփ Իւզաւանցի, Աղաբեգ Բաղաւանցի եւ Հայրապետ Տէր-Դաւիթեանց անտառային վերակացուները եւ դուրս են բերում մար- մինը: Եթէ կէս րոպէ ուշ հասնէր Տէր-Մար- ցարեանց, անտառապետին այլ եւս ազատել չէր լինի: Բայց ներկա եղողները եւ «Միւնիք» գործարանից բերած ֆելդշերը, մօտ երեք ժամ չարձակվելուց յետոյ, ուշքի են բերում անտա- րապետին»:

ՆԱՐՏԱԳԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

ԱՐՏԱԳԻՆ ԼՈՒՐԵՐ

—«С. П. Вѣд.» լրագրին թղթակցից գրում է Կ. Պօլսից. «Եթէ հաւատանք այստեղ տա- րածված լուրերին, սուլթանը հրաւիրել է իմէ- ղիլին Կ. Պօլսի նրա համար, որ հարց բարձ- րացնէ Եգիպտոսից անգլիացիների հեռացնե- լու եւ ինքիլին այն իրաւունքները վերա- դարձնելու մասին, որոնք միջազգային դաշ- նագրերով պահանջուում են նրան: Ասում են նոյնպէս, որ ինքիլին պէտք է բանակցութիւն- ներ վարէ հաշտեցնելու սուլթանին իր փեսայ Մահմուդ-Դամատ փաշայի հետ, որ պետական խորհրդի անդամ, Կ. Պօլսից փախած Դամայիլ- Բեկաւալ-Բէյին հետ երիտասարդ թիւրքերի կօ- միտէներին դուրս է անցնել եւ շարունակում է մէկը միւսի հետեւից ոչ այնքան հաճելի սիրաբանութեան մատուցանել սուլթանին, իրա- գրական կիճ յօդուածների եւ բրօշուրների ձեւով, որոնք մեծ ստուեր են դրում սուլ- թանի պալատի բոլոր ընկերներին վրա, որտեղ հաւաքվել են ոչ մի ճշմարտութիւն չը յարգող եւ բացի սուլթանից, չարքից եւ յանցանքից ա- լելի բան չընդունող մարդիկ»:

—«Новое Время» բերում է աւստրիական Թերթերի կարծիքները ռուս-բօլշեւական մեր- ձեցման մասին: «Neue Freie Presse» զուգա- դրում է Եվրոպայի տեսակցութիւնը այն դրամական աշակցութեան հետ, որ նորերս Ռուսաստանը ցոյց տուեց Բօլշեւիստային, 8 մի- լիօն փոխառութիւն անելով արտաքին պարտ- ըրի յուլիսեան տոկոսները վճարելու համար: Այդ փաստից «Neue Freie Presse» այն եզ- րակացութիւնն է հանում, թէ «Բօլշեւիստա- ծայնից իր անդրադարձութիւնը ուղղված էր հա- մար»: Իսկ այն լուրերը, թէ Ռուսաստանը համաձայնում է երաշխաւորել 80 միլիօն բօլ- շեւական նոր փոխառութիւնը, որի մասին բանակցութիւններ է վարում Պարիզում այն- տեղ եկած բօլշեւական ֆինանսների միւնիստ- րը, առիթ են տալիս «Neue Freie Presse»-ին ցոյց տալ Բօլշեւիստային Չինաստանը, որ նոյն- պէս երաշխաւորութիւն ստացաւ Ռուսաստա- նից իր փոխառութեան համար, որ արեց եւս- պոնական պատերազմից յետոյ, բայց այդ ե- րաշխաւորութեան իբր հատուցումն ստիպեց տալ Մանչուրիան: Ռուսաստանի կողմից դրա- մական աշակցութիւն ստանալը, աւստրիական լրագրի ասելով, Բօլշեւիստայի համար կը նշա- նակի զրկվել անկախութիւնից»:

—«Münch. Allg. Zeit.» հաղորդում է, որ Թիւրքաց դատարանը դատի է կանչել երիտա- սարդ թիւրքերի թերթի նախկին աշխատակից Անմեդեանին, սպառնալով դատել ի բացակա- յութեան, եթէ նա չը ներկայանայ տաս օրվայ ընթացքում:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

7 յուլիսի

ՆՕՎՕՁԵՐԿԱՍԿԻ Շրջանի վարչութեան ներ- կայացուցիչների ժողովում, որ տեղի ունեցաւ նախադնոյ ատաման գեներալ-լէյտենանտ Մակ- սիմովիչի նախագահութեամբ, ընդունվեց, որ Դօնի չրջանի ազգաբնակչութիւնը, անբերրու- թեան պատճառով, կարիք կը զգայ փոխառու- թեան պաշարելու պահեստի գոտանքից:

ԿՕՁՕՏԱԴՏ. Այստեղի լրագիրները անընդ- հատ գանգատվում են, որ յանցանքներն եւ բռնի գործողութիւնները աւելացել են Կապչ- տագոտում եւ որ ոստիկանական միջոցներ բա- ւարար չեն: Յանցարարների թիւը աւելանում է կապիտուլի մարդկանցով, որոնք գալիս են Կապչագոտ աշխարհի բոլոր ծայրերից:

ԼՕՆԴՈՆ. Միդլսեքսից, Կապի գաղթակա- նութիւնից, հաղորդում են, թէ Կիտլենքի նե- րում չորս հոգի մահացան զատապարտված 34 զերիների, մահվան պատիժը փոխարինելով տաժանակիր աշխատանքներով ցմահ Բէրմու- դեան կղզիներում:

ԿՐՕՆՇՏԱԴՏ. Դէվլետ, լուրերին նայելով, իր սակաւաթիւ կուսակիցներով գտնվում է Բէյլից քիչ հեռու, դէպի հարաւ-արեւմուտք: Պեկին. Ոստիկանական ծառայութիւնը Պե- կինում յանձնված է չինական իշխանութիւն- ներին. քաղաքը կատարելապէս հանգստի է: Դոն ամիսը չը լրացած՝ օտարերկրեայ զօրքերը կը հեռացվեն այստեղից, բացի զեսպանատե- րի եւ երկաթուղու պահպան զօրքերից: Բա- նակցութիւնները մաքսային տուրքերը աւե- լացնելու մասին դեռ եւս շարունակվում են:

ՊԵՆՏՈՐԻԱ. Կիտլենքի հաղորդում է Պե- րուսիայից, թէ անգլիական մի փոքրաթիւ զօ- րաբաժին, մայօր Մուրի հրամանատարու- թեամբ, Ջէմստոնի մօտ մի ամբողջ օր են- թարկվում էր յարձակման թշնամու գերազանց թուով զօրքերի կողմից, որոնք գտնվում էին Ֆուլչի հրամանատարութեան տակ, բայց յար- ձակումը անողութիւն չունեցաւ: Անգլիացի- ներից սպանված են եօթ մարդ, վիրաւորված են 3 օֆիցեր եւ 17 զինուոր: Թշնամու կո- րուստները յայտնի չեն: Գարա Ալվիսօրտից օգնութեան գնաց, թէպէտեւ նրանից օգնու- թիւն չընդրող չէր եղել:

ՆԻՇՆԻ-ՆՕՎՕՐՕՐԿԻ. Եկաւ ներքին գոր- ծերի միւնիստրը:

ԼՕՆԴՈՆ. Կիտլենքի հաղորդում է, թէ նա- խագահ Շաւինի ծանոթացում գտնված է ա- ւազ-քարտուղար Բէյլի նամակը նախագահին, որի մէջ տպված է, թէ Տրանսկապի կառա- վարութիւնը խորհրդակցութիւն ունեցան Բօ- տայի, Վիլիէմի եւ Սմուտի հետ, որի ժամա- նակ զեկուցվեց, թէ քաղաքի բռնիքներ անձ- նատուր են եղել, ռազմավարներ եւ ուսուցիչի պաշարները վերջնապէս վրա են, տրանս- վապեան կառավարութիւնը քայքայվում է եւ եւրօպական բարդութիւններին նարաւորու- թիւն չէ նախատեսվում, ուստի եւ Տրանս- վապի կառավարութիւնը վճեց թլլուութիւն խնդրել սուրանադաներ ուղարկելու Կրեմլէր նախագահին: քացատրիւնը նրան երկրի զար- հուրելի գործերը: Իսկ եթէ այս խնդիրը մերժվի, Բէյլի առաջարկում է զինադադար

ապրիլի 8-ին ֆինանսների մինիստրին տրված Բարձրագույն Անուանական հրամանի 1-ն յօ- դուածում: Վերոյիշեալ նոր սերիաների պետա- կան 43/0 րէնտայի վկայականները կունենան կարծենք, որոնց ընթացքը կը սկսվի 1901 թւի յունիսի 1-ից: 3) յայտարարութիւններ կամաւոր փոխանակութեան մասին կընդունվեն 1901 թւի յունիսի 10-ից մինչեւ 21-ը (21-ն էլ մէջը հաշւած) պետական բանկի Ս. Պե- տերբուրգի, Մոսկուայի, Վարշավայի, Կիւմի, Օդեսայի եւ իւրաքանչեւ գրասենականներում եւ այդ ժամանակամիջոցում եղած պահանջները, փոխանակութեան վերաբերմամբ, բոլորն էլ բաւարարութիւն կը ստանան:

Յուլիսի 10-ին Թագաւոր կայսրը այցելեց Աղաբէրտ պրինցին գերմանական «Շարլոտա» նաւում: Պրինցին չորսրկած է Անդրէյ Նախա- կոյի չքանչանք:

ԼՕՆԴՈՆ: Այսօր Կէմբրիջեան դուքսը բա- ցեց տուրքերու լուրջ դէմ մաքառելու համար գումարված համաժողովը: Մինիստր Լանս- դուն այնուհետեւ ճառ ասաց, որի մէջ կա- րգաւորութեան կողմից աջակցութիւն խոստա- ցաւ համաժողովի աշխատանքներին: Բերլինի Լէյպցի պրոֆէսորը իր ճառում բանաբանն առաջ բերեց այն առաջադիմութիւնը, որ վերջին տարիներս արեւելքի Գերմանիայում տուրքերու լուրջ հետ մաքառելու գործը: Այդ առաջադիմութիւնը շատ գոհացուցիչ է: Լորդ Լիստեր ողջունեց պատգամաւորներին անդ- լիական բժշկանքի կողմից, լորդ-մէրը՝ քա- ղաքի կողմից: Կէմբրիջեան դուքսը կարգաց թագաւորի հետադիմը, որով նա ողջունում է համաժողովը: Վերջը նա յայտնեց, որ իր լա- ժովը, 120,000 ֆունտ օտարինգ է նշանակ- ված մի հասարակական սանատորիում հիմնե- լու համար բոս ցանկութեան համաժողովի:

ՊԱՐԻԶ: Ընդհանուր խորհրդարանների ընտ- րութիւնները ժամի 12-ի մօտ ներքին գոր- ծերի մինիստրութեան մէջ յայտնի էին 1,444 ընտրութիւնների հետեւանքները: յայտնի չեն 10 ընտրութիւնների հետեւանքները: Ընտրված են 557 հանրապետականներ, 477 արմատական- ներ, 33 սօցիալիստական—արմատականներ, 54 սօցիալիստներ, եւ 29 աջակողմեաններ, որոնք յարել են հանրապետութեան: Հանրա- պետականները ձեռք են բերել 47 նոր տեղեր: Լա-Շարանտ ղեկավարում է հանրապետա- կանները այս առաջին անգամն է, որ կարող- ացել են միմեանս ընտրել: Ստանալու Բու- ռնյում ընտրութիւնների արիթմիկ տեղի են ու- նեցել լուրջ անկարգութիւններ,—ցուցարար- ները չընկալել փողոցի փողոց, ջարդել են մի քանի խանութների ապակիներ եւ աւերում- ներ առաջադրել մի սփռարանում: Մի քանի ոստիկաններ վիրաւորված են, հինգ հոգի՝ ձերբակալված:

ԼՕՆԴՈՆ: Լորդերի ժողով: Պատասխանելով Ձինաստանին վերաբերող զանազան հարցում- ների, Կրանթորն ասում է, որ Շանգայում այժմ օտարազգի զորքերից մնում են 1,945 անգլիացիներ, 750 ֆրանսիացիներ վեց թնդա- նոթիւնով, 850 գերմանացիներ 4 կամ 6 թնդ- դանոթիւնով եւ 300 եսպանացիներ: Պայմա- նաւորվել են, որ Ձինաստանը վարձատրու- թիւնը վճարելու է 4% օրիգինալներով, որ նա տարու է չահագործված պետութիւններից իւրաքանչիւրին:

Պրինց Տուան, վերջին լուրերին նայելով, գտնվում է Մոսկուայի կառավարիչ Օլամանի մօտ, որ իր ազդական է: Տուանֆուսեան զրա- վում է Կանսույի արեւմտեան մասում: Կառա- վարութեանը օչինչ յայտնի է այն մասին, իբր թէ Տուանի իշխանութեան տակ գտնվում են նշանաւոր ուժեր:—Հիւսիսից հաղորդում է, որ չինական արշաւանքի վրա արված ընդհանուր ծախսերը, չը հաշւած նաւատորմի ծախսը, հաս- նում են 4,350,000 ֆունտ ստերլինգի:

Կ. ՊՕԼԻՍ: Որովհետեւ թիւք իշխանու- թիւնները թիւք-սերբական սահմանում գրա- լեցին Մակեդոնիայի սերբական հիւպատոսին ուղարկված պաշտօնական նամակները, սեր- բական դեսպան Գրուլիչի գիմեց Բ. Դոան յայտարարութեամբ, որին արտաքին գործերի մինիստր պատասխանեց, որ ինքը արդէն հրաման է արձակել վերադարձնել այդ նա- մակները, որովհետեւ գրաւուած տեղի է ու- նեցել թիւքիստանութեամբ:—Թիւք աւազակ- ներ կողպուման նպատակով յարձակվեցին Բրուսայի յունական հիւպատոսարանի վրա բայց, յափառական բաները թողնելով, փա- խան, երբ հիւպատոսարանի կապուտները սկը- սեցին գնդակներ արձակել նրանց վրա: Յունական հիւպատոսը բողոք յայտնեց

Բրուսայի վալիին եւ պահանջեց երաշխա- տրութիւն իր անձնական ապահովութեան համար եւ պատիժ յանցաւորների համար: Կ. Պոլսի յունական դեսպան իշխան Մաքրոկոր- դատո համապատասխան քայլեր արեց Բ. Դո- անի նկատմամբ:

ՊՐԷՏՐԻՍԱ: Այսօր կայացաւ նախագահ Կրիւ- գէրի կնոջ թաղումը:

ԲԵՆԳԱԼԻ: Սուլթանի յատուկ դեսպանը, որ Հին Սերբիայում կատարված ղեպերի հետ կապված յանձնարարութիւն ունի, այսօր ժամանեց Երկու աղիւտանների հետ:

Խմբագիր՝ ԱԼԷՔԱՆԴԵՐ ԳԱԼԱՆՔԱՐ
Հրատարակիչ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆՆԱՆ
ԻՄՈՒՆԱԿ ԻԵԼԻՔ-ԱՂԱՄԱՆՆԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՌՈՐ ՀԻՒՆԻՒՆՈՅ

Բ. ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆԻ
(Կուլիս, Վորոնցովի արձանի հանդէպ)

ա մ ե ո ռ, բ ց ք ի կ ի տ կ ի օ ռ ե ի յ:
Ա Յ Մ Ո Տ Ն Ե Ր Ը

Բ. Ա. Նախասարգիւն—11—12 ժ. վերաբուծու- թեան, վերնական (սիֆիլիս) եւ միջատեւ. հիւանդ.

Ե. Մ. Ձիւղովանի—9—10 ժ. աչքի, ներքին եւ ներքին:

Բ. Մ. Գալիլիլի—12—1 ժ. ականջի, քթի եւ կ- կողմի:

Բ. Մ. Բարանասեւեց—11—12 ժ. կանանց եւ երե- իսայց հիւանդ.

Ա. Պ. Կարապետեան—1—1/2 ժ. ներքին եւ երե- իսայց:

Ե Ր Ե Վ Ո Ն Ե Ր Ը

Ե. Ն. Ռոստամբեկով—6—7 ժ. վերաբուծութեան եւ մորթի:

Ե. Մ. Գալիլիլի—7—8 ժ. ականջի, քթի եւ կ- կողմի:

Բ. Ա. Նախասարգիւն—7 1/2—8 ժ.

Վար 50 կ. չքաւորները ձրի համախորհրդի (Կոն- իտին) եւ օպերացիայի համար առանձին:

Օ. Տ. Անվանիսի—տանը, ծաղկահատ եւ բժը- լական մարմնամարդ. դիմել 11—1 ժ.:

Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժուկապետ ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆ

Մամուլի տակից դուրս եկաւ
(8-րդ տպագրութեամբ) իմ կազմած

ԴԱՍԱՏԵՏՐ ԿՐՕՆԻ
Ա. տարի

Հաւանութիւն գտած (одобрено) Կովկա- սի ուսումնարանական չրջանի հոգաբարձու- թեան կողմից

Մինչեւ յունիսի վերջը մամուլի տակից դուրս կը գալ

«ՄԱՐԱԶԱՆ ՊԱՏՄԱՐԻՒՆ» Հին ՈՒՍԻՏԻ
Յարմարեցրած է պետական գրքոցների հա- (ե. հ. չ.) մար: 5—5

Լոյս տեսաւ եւ վաճառվում է
Բ. Տ. Ն. ՏԵՐ-ԻՍԱԿԱՆԻ
ԺԱՆՏԱՆՏ կամ ԶՈՒՄՍ.

Գինն է 5 40Գ.

Մնացել են շատ քիչ օրինակներ
Դիմել՝ Александрополь. Книгопродавцу
Степанианъ. 4—5

Պետերբուրգի բժշկական վարչութեան թույլ- տուութեամբ: Մեծ արկղիկը 5 րուրի, փոք- րը—3 ր. եւ 1 ր. 50 կ.:

ՊԵՏԼԻՍԻՆԻՆԻ
ՆԱՐ ՄԻՋՈՑ

մազերը բուցնելու եւ ամրացնելու համար, ոչնչացնում է թեփոյ Դուրս եւ եկել նաեւ բոլորովին նոր միջոց

ՅՈՒՆԿԱՐԸ

Երեսին քնքշութիւն եւ սպիտակութիւն տալու համար, ոչնչացնում է արեւի պատ- ճառած սեւութիւնը, մուկները, տալիս է կա- չուին քնքշութիւն եւ սպիտակութիւն: Այդ գնեք չափաւոր են. մեծ արուակը, արկղի- կի մէջ, 2 րուրի, փոքրը—1 ր. 50 կ.:

Մախվում են բոլոր պարֆիւմերական եւ դեղավաճառական խանութներում: Գլխա- ւոր պահուէլը գտնվում է Պետերբուրգում, Պոլշինսկայա փողոց տ. № 15, բնակա- րան № 12. պահեստի բաժանմունքները գտնվում են. Թիֆլիսում կովկասեան դե- դատան սպարանքների վաճառման ընկերու- թեան խանութում: Երեսեան հրապարակ եւ նրա բաժանմունքում, Միքայէլեան փո- ղոց եւ Բաղուած. նաեւ Միքայէլեան կա- մուրջի վրա, Պապովի եւ Արիստակովի դե- դատներում: Օտարաքաղաքացիների պա- տուէրները կատարվում են անմիջապէս՝ պատմով:

38—100

Թիֆլիսի Նաւարդիւնաբերական Ընկերութեան
Վարչութիւնը

պատեւ ունի յայտնել պ. պ. փայտէրերին, որ յունիսի 6-ի տարեկան հերթական ընդհանուր ժողովի չարունակութիւնը տեղի կունենայ նախկին «Եւրօպա» այգում, Միքայէլեան փողոցում, Գուրգէնովի տանը, № 143, «Վէտցէլ» հիւրանոցի կողքին, չորեքշաբթի, յունիսի 11-ին, երեկոյեան ժամի 7-ին:

1—1

Ֆինանսների մինիստրի քոյուուրեամբ
ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

(Баку, Пращешная, домъ Теръ-Ованесова)

Կուրսերի նպատակն է տալ ունիւնդիւններին մասնագիտական-առեւտրական կրթու- թիւն եւ պատրաստել հմուտ հաշւապահներ: Աւարտողները ստանում են ատտես- տատներ: Կուրսերում աւանդում են՝ 1) Առեւտրական թուարանութիւն եւ թուա- րանութիւն համրիչի վրա. 2) Հաշւապահութիւն՝ արդիւնաբերական-գործարանական, առեւտրական եւ բանկային. 3) Առեւտրական թղթակցութիւն. 4) Առեւտրական տնտե- սագիտութիւն. 5) Առեւտրական եւ մուրհակային օրէնքներ. 6) Գեղագրութիւն եւ ա- րագագրութիւն (ուղղումն ձեռագրի):

Ընդունելութիւնը՝ սեպտեմբերի 1-ից ամեն օր՝ կուրսերում եւ եղբ. Մովսիսեան եւ ընկ. ԲԱԳՈՒՄԻ ԲԱԺԱՆԻՍԵՐՈՒՄ Կուրսերի կանոնադրութիւնը (УСТАВЪ) եւ մանրամասն ծրագիրը—տրվում եւ ուղարկվում են ձրիւրար: Օտարաքաղաքացիները զիմում են՝ БАКУ, учредителю коммерческихъ курсовъ А. И. Теръ-Каспа- рову. (ե. չ.) 3—25

Թիֆլիսի ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ ԴԻՐԵԿՏՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՆՏԱՐԸ

հաղորդում է ի գիտութիւն ընդհանուրի, թէ աշակերտների ընդունելութիւնը նախապատրաս- տական դասարանի ստորին բաժանմունքը եւ նոր բացվող միջին բաժանմունքը նշանակ- ված է այս 1901—1902 ուսումնական տարվայ օգոստոսի 28-ին եւ 31-ին: Ստորին բաժան- մունքը ընդունվում են տղաներ 7-ից մինչեւ 9 տարեկան հասակում առանց քննութեան, մի- ջին բաժանմունքը—8-ից մինչեւ 10 տարեկան՝ քննութեամբ: Խնդիրներ ընդունվում են եր- կուշարթի, չորեքշաբթի եւ չարաթ օրերը, զերեկվայ ժամի 11-ից մինչեւ 1-ը, ուսումնական ինտեթեան մէջ: Խնդրի հետ միասին պէտք ներկայացնել միտքիական վկայականի իսկական- նը, վկայականների՝ կոչման, ծաղկի պատուստման մասին կամ նրանց պատճենները: Խնդ- րագիրները առանց վերոյիշեալ զոկումներների չեն ընդունվի: (9, 11, 13, 16, 21) 2—5

„Վ Տ Ա Կ“
Ժողովածուի ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ

յայտարարում է իր բոլոր բաժանորդներին հետեւեալը.

Ժողովածուն մամուլի տակից լոյս է տեսել, սակայն, օրինակն ուրոշ ձեւակա- նութեան պատճառով, բաժանորդներին կուղարկվի կամ ծախու կը հանվի միմիայն յունիս ամսվայ վերջերին:

Մինչեւ յունիսի 10-ը բոլոր գործակալները պարտաւոր են խմբագրին հասցնել բաժա- նորագները եւ բաժանորդների ցանկը, այլապէս, այդ օրից յետոյ եկած բաժանորդները կը վճարեն 1 ր. 50 կ. եւ 2 ր.: Ժողովածուն ունենալ ցանկացողները այսուհետեւ պիտի զիմեն «Տարագի» խմբագրութեան մէջ, պ. Արշակ Մեհրաբեանին: 3—3

ԳՈՒՏԵՆԲԵՐԳ ԳՐԱԽԱՆՈՒԹՈՒՄ
վաճառվում են

«Ձէյթունի ներկայէն եւ անցեալէն» 1 50
«Բանաստեղծը եւ հերոսը» փոխ. Տ. Յովհաննիսեան. — 25
«Յիւսուս-պրոսպանի պատերազմը» Տ. Յովհաննիսեան. — 5

Դիմել՝ Тифлисъ. Книжный магазинъ Гуттенбергъ. Г. Галустьяну. 4—5

Թիֆլիսի Կենտրոնական գրախաւսաւոցում

ծախվում են հետեւեալ հայերէն գրքերը՝

Տմբւալի Պաշան, Չուսնա-Տմբալ, հատ. III. Բազու 1901 թ. գ. 40 կ. նաեւ հատ. II. գ. 40 կ., միմեանցից անկախ:

Աղայեան Ղազ., Արուիւն եւ Մանուէլ, Երեք մար մի գրքով, լրացած, Թ. 1901 թ. գ. 60 կ. Այվազեան Բ., Հիւսիսի արձիւր, պատմական վէպ, Թիֆլ. 1901 թ. գ. 1 ր.

Աղաւ Երկաթ, պատմական վէպ, Թիֆլ. գ. 1 ր.
Տանջանքի բովից, իրական կեանքից, Թիֆլ. գ. 30 կ.

Ճուղուրեան Յար. քաւ., Մոսկուայի աշխարհ, ա. գիրք—60 կ., ք. գիրք—50 կ., գ. գիրք—40 կ. եւ Աղա ս. Մարգար—15 կ.

Պարոնեան Յակ., Քաղաքավարութեան վեպներ, Թիֆլ. գ. 75 կ.
Միւսաղ, հեղինակի պատկերով, Թիֆլ. գ. 1 ր. 25 կ.

Արեւելեան առումնաբոյժ, կատակերգ. 5 արար. Թիֆլ. 50 կ.
Գամառ-Քաթիպա (Ի. Պատկանեան), Բանաստեղծութիւններ, գ. տպ. Պետեր. 50 կ., կազմով 65 կ.

Դիմել՝ Тифлисъ, Въ Центральную Книжную Торговлю. (Կ. Ե. Կ.) 2—3

ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ
Ե Ր Կ Ո Ւ Ս Ե Ռ Ի Ա Ն Ձ Ա Ն Ց Հ Ա Մ Ա Ր
ՏԱՍՆԻՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Առեւտրական Կուրսերի նպատակն է՝ մասնագիտական առեւտրական կրթութիւն տա- երկու սեռի անձանց եւ պատրաստել գործնական ճանապարհով հմուտ հաշւապահներ: Աւարտողները ստանում են ատտեստատներ: Առեւտրական Տնտեսութիւն, 2) Առեւտրական Թուարանութիւն, 3) Հաշւապահութիւն (պարզ, կրկնակի եւ բանկային), 4) Թուարանու- թիւն համրիչի վրա, 5) Առեւտրական թղթակցութիւն, 6) Առեւտրական եւ մուրհակ կա- նոնաւորութիւն եւ 7) Գեղագրութիւն, վատ ձեռք ուղղելը:

Աւտուր սկսվելու է սեպտեմբերի 15-ից: Ընդունելութիւնը սեպտեմբերի 1-ից, ա- մենայն օր, առաւօտեան 10-ից մինչեւ 11-ը, եւ երեկոյեան 4-ից մինչեւ 8 ժամը, կուրսեր հիմնողը բնակարանում, Սուրբարկում, Ալեքսանդր Փրիլոբովի տանը № 9, Սերգեյեւկայա եւ Լեւոնովսկայա փողոցների անկիւնում: Մրագիրը եւ կանոնները կարելի է ստանալ ձրիւրայէն եւ եղբ. Մովսիսեանի բանկային գրասենականում եւ կուրսեր հիմնողը բնակա- րանում: Օտարաքաղաքացիը զիմում են՝ Тифлисъ, С. П. Мануэльянцу. (չ. ք.) 9—25